

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԳՐԵՍԻՎ ՀԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԲԱՇԽԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՐՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ*

ՀՏԴ 336.2

Նարինե Ասրյան

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի ասպիրանտ
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
narine.asryan@ysu.am

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում մեծացել է պետության հարկային եկամուտների նոր աղբյուրների որոնման և գործարկման անհրաժեշտությունը, ինչը կապվում է հարկման տարբեր մեխանիզմների՝ համահարթ, պրոգրեսիվ և ռեգրեսիվ, կիրարկման պրակտիկայի հետ: Առհասարակ, հարկման մասին խոսելիս պետք է հաշվի առնել նրա ոչ միայն ֆինանսատնտեսական, այլև՝ քաղաքական ասպեկտը, քանզի հարկման այս կամ այն մեխանիզմն արտահայտում է հասարակության տարբեր խմբերի դասակարգային շահերը:

Սույն հոդվածի շրջանակներում առանձնահատուկ ուշադրության է արժանացել պրոգրեսիվ հարկումը, որը պատմականորեն հանդես է եկել որպես պետության վերաբաշխիչ քաղաքականության իրականացման գործիք, այն է՝ հասարակության ներսում ռեսուրսների արդյունավետ վերաբաշխումն ապահովող նախապայման: Հոդվածում ներկայացվում են հարկման պրոգրեսիվ մեխանիզմի տեսական հիմքերը, մասնավորապես՝ զոհողության հավասարության և նվազագույն զոհողության տեսությունների շրջանակներում, հիմնավորվում և քննարկվում դրա կիրարկման անհրաժեշտությունը, առանձնահատկությունները, ինչպես նաև հատուկ կերպով առանձնացվում են հարկման այս ուղույն մեխանիզմի առավելությունները և թերությունները: Մի կողմից, այն զարգացման խթան է, նպաստում է տնտեսական եկամտաբերության ավելացմանը, սոցիալական անհավասարությունը խելամիտ մակարդակին հասցնելուն, սոցիալական շերտավորվածության նվազմանը, սակայն, մյուս կողմից, աճում է ոչ տեսանելի եկամուտների, արդյունքում՝ ստվերային տնտեսության, ծևավորման վտանգը՝ նպաստելով նյութական խթանման դերակատարության նվազմանը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հաշվի առնել հարկման պրոգրեսիվ մեխանիզմի կիրառման արդյունքում ի հայտ եկած տնտեսական, սոցիալական և իրավական հետևանքները:

* Հոդվածը ներկայացվել է 02.03.2022:

Տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը 10.03.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 10.03.2022:

Բանալի բառեր՝ (ան)հավասարություն, եկամուտ, շուկա, սոցիալական արդարություն, սոցիալական լարվածություն, հարկման մեխանիզմ, պրոգրեսիվ, ռեգրեսիվ և համահարթ հարկում, հարկային դրույքաչափ, գոհողության հավասարության տեսություն, նվազագույն գոհողության տեսություն:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն ավելի քան երկու հարյուր պետություն, որոնց ճնշող մեծամասնությունում կիրառվում է պրոգրեսիվ հարկման մեխանիզմը. այն ոչ միայն բյուջետային մուտքերի հիմնական աղբյուրն է, այլև, նախ՝ շուկայական տիպի տնտեսության կառուցվածքային բաղկացուցիչ, այնուհետև՝ գործուն ներհասարակական սոցիալական կարգավորիչ: Ավելին, պրոգրեսիվ հարկումը հանդես է գալիս որպես պետության վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետ իրագործման երաշխիք, քանի որ այն, ելնելով սոցիալական արդարության սկզբունքային ընկալումներից և կոչված լինելով նվազագույնի հասցնելու ներհասարակական սոցիալական լարվածությունը, ապահովում և երաշխավորում է հասարակության համաչափ և բնականոն սոցիալ-տնտեսական զարգացումը:

Նյութեր և մեթոդներ

Հոդվածում արծարծվող պրոբլեմատիկայի բննարկման համար տեսամեթոդաբանական հիմք է հանդիսացել հիմնականում ռուսալեզու գրականությունը, իսկ հետազոտության մեթոդներից կիրառվել են համեմատության, վերլուծության և ընդհանրացման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

Աղբյուրներ

Բննարկվող խնդրի ուսումնասիրության և հետազոտության արդյունքում վերհանվել են հարկման պրոգրեսիվ մեխանիզմի առավելությունները և թերությունները, հնարավորությունները և սահմանափակումները, ինչպես նաև կատարվել է եզրահանգում առ այն, որ պետության կողմից հարկման այս կամ այն մեխանիզմի ընտրությունը պայմանավորվում է «տնտեսական արդյունավետություն-սոցիալական արդարություն» դիստոնիայի ընկալումներով:

Անցյալ դարի վերջը, մասնավորապես՝ 1980-1990-ական թթ., նշանավորվեցին տնտեսական հավասարության երևույթի նկատմամբ հետաքրքրության նվազմամբ: Ավելին, հոռետեսական էր մոտեցումն այն մտայնության նկատմամբ, որ հավասարությունը կարող է հանդես գալ որպես սոցիալ-տնտեսական զարգացման նորմատիվային իդեալ, իսկ վերջինիս ապահովման անհրաժեշտությունը՝ որպես հասարակությունների զարգացման առանցքային չափորոշիչ:

Հարստությունը (կամ կապիտալը), որն արդեն բավականին անարդյունավետ և ոչ համաչափ էր բաշխված 1990-ական թթ., աշխատանքային գործունեությունից ստացված եկամուտների ցածր մակարդակը, շուկայի ոչ տնտեսական բնույթը, ինչպես նաև աշխարհաքաղաքական, Ժողովրդագրական, ինստիտուցիոնալ և այլ գործոններ ձևավորեցին հասարակությունների անթույլատրելի սոցիալ-տնտեսական շերտավորվածության նախադրյալները:

Եթե խոսենք հասարակությունների ներսում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների մասին, ապա պետք է նշենք, որ վերջիններիս համար առանցքային դարձավ տնտեսական աճի ապահովումը, իսկ կապիտալի արդար բաշխման խնդիրը, ենթադր-

վում էր, որ պետք է լուծվեր ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների առկայությամբ. արդյունավետ գործառնող շուկան և պետական-քաղաքական համակարգը պետք է ապահովեին հասարակության ներսում սոցիալական արդարության սկզբունքների կերտումը և կիրարկումը:

Առհասարակ, հարկման ներքո ընկալվող սոցիալական արդարությունը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել, սակայն առավել հատկանշական են ստորև ներկայացվող երկուսը.¹

- -հավասար պայմաններում գտնվող հարկատուները (հորիզոնական հավասարության սկզբունք)

- -առավել բարձր եկամուտներով հարկատուն պետք է ավելի շատ հարկ վճարի (ուղղահայաց հավասարության սկզբունք):

Այսպիսով, եթե ռեգրեսիվ հարկումը համապատասխանում է շուկայական արդյունավետության սկզբունքին, ապա պրոգրեսիվ հարկման մեխանիզմը համարվում է ուղղահայաց հավասարության սկզբունքին առավել համապատասխան հարկման ձև և գործում է սոցիալական արդարության ընկալումներից ելնելով՝ ավելի լայն հնարավորություններ ստեղծելով եկամուտների համահարթ վերաբաշխման համար:

Հարկ է նշել, որ կենտրոնացված, պլանային տնտեսությունից ազատ շուկայական հարաբերություններին անցմանը զուգահեռ պետություններն աստիճանաբար հրաժարվում են սոցիալական երաշխիքների ապահովման համար հասարակական պատասխանատվությունից, մասնավորապես՝ իրենց վրա վերցնել սոցիալական ծախսերի ֆինանսավորման բեռը՝ այն թողնելով հասարակության վրա: Այս հանգամանքից ելնելով՝ անհրաժեշտ դարձավ սոցիալ-տնտեսական անհավասարության խորացումը կանխող զսպիչ մեխանիզմների ներդրում և գործարկում: Ավելին, ոլորտի մասնագետները նշում են, որ նույնիսկ այսօր, երբ սոցիալական հիմնախնդիրների լուծման հրատապությունն առավել քան արդարացված է, պետությունների կողմից իրականացվող վերաբաշխիչ քաղաքականությունը դեռևս կրում է ոչ համակարգային, ֆրագմենտար բնույթ²:

Ակնհայտ է, որ հասարակության սոցիալ-տնտեսական անհավասարության հիմնական խնդիրը կայանում է ոչ այնքան անբավարար ռեսուրսների, որքան ազգային հարստության բաշխման մեխանիզմների անարդյունավետության մեջ³: 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո սոցիալ-տնտեսական անհավասարության հիմնախնդիրն էլ առավել նշանավորվեց շուկայական տնտեսությամբ երկրների համար. այս մասին է վկայում ակադեմիական-փորձագիտական միջավայրում սոցիալական և քաղաքական փիլիսոփաների, տնտեսագետների և պատմաբանների, քաղաքական և հասարակական գործիչների աշխատանքներում դիտարկվող հիմնախնդիրն ցուցաբերված հասարակական ուշադրությունը:

Հատկանշական է, որ ըստ բնակչության՝ եկամուտների սոցիալ-տնտեսական

¹ Изотова О.И., Налог на доходы физических лиц как инструмент реализации социальной политики государства // Экономика. Налоги. Право. 2014. № 2. стр. 119-122.

² Шевяков А.Ю., Кирута А.Я., Неравенство, экономический рост и демография: неисследованные взаимосвязи. М.: М-Студио, 2009, стр. 192. URL: <http://cs1.isc.irk.ru/BD/Books/Демография.pdf>

³ Шевяков А.Ю., Неравенство доходов как фактор экономического и демографического роста // Инновации. 2011. № 1. сс. 7—19.

սուր անհավասարության հիմնախնդիրը վաղուց հաղթահարվել է զարգացած երկրների կողմից, սակայն դեռևս պահպանվում է զարգացող և փոխակերպվող հասարակությունների մեծամասնության դեպքում: Ընդունված փաստ է, որ խորը սոցիալ-տնտեսական անհավասարությունը ոչ միայն ապակայունացնող գործոն է, որը պոտենցիալ վտանգ է ստեղծում ներհասարակական կոնֆլիկտների առաջացման համար, այլև բացասաբար է ազդում պետության տնտեսական և ժողովրդագրական ցուցանիշների վրա: Ավելին, զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ համահավասար եկամուտների որոշակի մակարդակ կարելի է նվաճել նույնիսկ շուկայական տնտեսության դեպքում, իսկ դա մեծապես ձեռք է բերվում սոցիալական ծախքերի մեծ տեսակարար կշռի և պրոգրեսիվ հարկմամբ բնութագրվող սոցիալական քաղաքականության համատեքստում:

Ոչ մի զարգացած և արագընթաց կերպով զարգացող պետություն կասկածի տակ չի դնում եկամուտների հարկման պրոգրեսիվ մեխանիզմի կարևորությունը. հակասությունները հիմնականում կապված են հարկային դրույքաչափի սահմանման հետ¹: Այսպես, օրինակ՝ ներկայումս Մեծ Բրիտանիայում պրոգրեսիվ հարկումը կիրառվում է երեք կատեգորիաների եկամուտների նկատմամբ՝ շահութաբաժնային, կուտակումներից և խնայողություններից ստացված եկամուտ, ինչպես նաև՝ այլ եկամուտներ, որոնք ընդգրկված չեն վերոնշյալ երկու կատեգորիաներում, ներառյալ աշխատավարձը: Իսկ Ֆրանսիայում բնակչության եկամուտներից ստացված հարկերը գանձվում են պրոգրեսիվ սանդղակին համապատասխան՝ հաշվի առնելով սոցիալական, տնտեսական, ընտանեկան և այլ պայմաններ: Հարկային դրույքաչափը կարող է տատանվել 0-58 %-ի սահմաններում, ընդ որում, ամեն տարի սանդղակը ձգգրտվում է, ինչը թույլ է տալիս հաշվի առնել նաև ինֆլյացիոն գործընթացների ազդեցությունը: Շվեյցարիայում ձևավորվել և գործում է հարկման եռաստիճան համակարգ. հարկերը գանձվում են համադաշնային կառավարության, կանտոնների և մունիցիպալիտետների կողմից: Հարկման օբյեկտներ են հանդիսանում կենսաթոշակը, կենցաղային ծառայությունները, լրավճարներն ու պարգևավճարները և այլն: Ֆիզիկական անձանցից հարկվող եկամտահարկի դրույքաչափերը պրոգրեսիվ են՝ առավելագույնը 11,5 %:

Հարկման պրոգրեսիվ համակարգը բնորոշ է ոչ միայն զարգացած արևմտաեվրոպական երկրներին. այսպես, օրինակ՝ Չինաստանում կիրառվում է պրոգրեսիվ հարկման բարդ, բազմաստիճան (ինը մակարդակ) համակարգ, որտեղ հարկման ստորին մակարդակը կազմում է եկամուտների 9, իսկ վերին մակարդակը՝ 45 %-ը:²

Եկամուտների հարկման մեխանիզմները, մասնավորապես՝ ռեգրեսիվ, համահարթ և պրոգրեսիվ տարատեսակները քննարկելիս անհրաժեշտ է հասկանալ, որ անկախ հարկման իրականացման ձևից, դրանցից յուրաքանչյուրը՝ որպես վերջնաորյունք, ենթադրում է հասարակության ներսում եկամուտների վերաբաշխման իրագործում: Հարկման այս կամ այն մեխանիզմը որդեգրելիս պետությունը կանգնում է եր-

¹ Костылева Л.В., Налогообложение как механизм регулирования неравенства населения / Л.В. Костылева // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз. – 2011. – № 3 (15). – стр. 67.

² Морозова Г.В., Мигунова С.В., Введение прогрессивной шкалы налогообложения физических лиц как способ реализации принципа справедливости в налогообложении, сс.1-2, https://www.elibrary.ru/download/elibrary_21052178_52566201.pdf

կրնտրանքի առջև՝ ինչը կարևորել՝ սոցիալական, թե՛ շուկայական արդարությունը/արդյունավետությունը. ընդ որում, ընտրությունը պայմանավորվում է պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության առանձնահատկություններով, մասնավորապես՝ պետական բյուջեում սոցիալական ծախսերին հատկացվող մասնաբաժնով:¹

Հարկ է նշել, որ պրոգրեսիվ հարկման մեխանիզմի մասին առաջին գաղափարները ձևավորվել էին դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին՝ պետության սոցիալ-տնտեսական զարգացման պահանջի և ֆինանսական կարիքների ազդեցության ներքո: Այսպես, հարուստների եկամուտների պրոգրեսիվ հարկման օգտակարության վերաբերյալ առաջին մտքերը հանդիպում են դեռևս Ա.Սմիթի մոտ: Իսկ Ֆրանսիայում պրոգրեսիվ հարկման անհրաժեշտության վերաբերյալ գաղափարները զարգացել են 18-19-րդ դարերում (Ժ.Ժ.Ռուսո, Ժ.Բ.Սեյ): Այսպես, ըստ Ռուսոյի «պետությունը պահպանում է հարուստների սեփականությունը և հազիվ թե հնարավորություն տալիս աղքատին օգտվել այն խրճիթից, որը վերջինս կառուցել է սեփական ջանքերով»: Իսկ Սեյը, թվալիս օրինակներով և քանակական տվյալներով ապացուցելով, որ համահարթ հարկումը չի հանգեցնում հավասարության, նշում էր, որ «արդարացի է միայն պրոգրեսիվ հարկումը»:²

Պատմականորեն եկամուտների պրոգրեսիվ հարկումը դիտարկվել է որպես վերաբաշխիչ քաղաքականության սոցիալապես արդարացի գործիքներից մեկը՝ հասարակության սոցիալ-տնտեսական անհավասարության մեղմման նպատակով: Ի տարբերություն հարկման ռեգրեսիվ մեխանիզմի, որի շրջանակներում հարկի մեծությունն իր բացարձակ արժեքով նույնն է բոլորի համար՝ անկախ եկամուտից, ինչպես նաև՝ համահարթ հարկման, որի դեպքում հարկային տոկոսադրույքը նույնն է բոլորի համար՝ անկախ եկամտից, պրոգրեսիվ հարկման դեպքում հարկային դրույքն աճում է եկամտի աճի հետ մեկտեղ՝ այդպիսով թույլ տալով տարբերակել հարկվող եկամտի չափը՝ կախված հարկատուների ֆինանսական վիճակից:

Պրոգրեսիվ հարկման պաշտպանության համար առաջադրված տեսություններից առանձնահատուկ ուշադրության են արժանի երկու՝ զոհողության հավասարության և նվազագույն զոհողության տեսությունները:

Զոհողության հավասարության տեսությունը հիմնված է այն պնդման վրա, որ եկամտի չափի ավելացման հետ մեկտեղ նվազում է դրա սուբյեկտիվ արժեքը, քանի որ այն սկսում է ծախսվել հիմնականում ոչ այնքան անհրաժեշտ, երկրորդական կարիքների բավարարման վրա: Այս պնդման համաձայն՝ հարկման բեռը բոլոր վճարողների համար հավասարեցվում է միայն պրոգրեսիվ կիրառման դեպքում: Այսպիսով՝ «հարկումը պետք է լինի պրոգրեսիվ բնույթի, քանի որ միայն այս պայմանի առկայության դեպքում է հնարավոր խոշոր հարկ վճարողի հարկման սուբյեկտիվ բեռը հավասարեցնել մանր հարկ վճարողի հարկման սուբյեկտիվ բեռին: Մանր հարկ վճարողի համար որոշակի հարկային դրույքաչափ սահմանելով՝ մենք դրանով ստիպում ենք նրան

¹ Лыкова Л. Н., Букина И. С. Налоговые системы зарубежных стран: учебник для бакалавриата и магистратуры. М. : Издательство Юрайт, 2017, сс. 65-68.

² Пушкарева В.М. История финансовой мысли и политики налогов. – М.: Финансы и статистика, 2001, стр. 120.

հրաժարվել ինչ-որ կարևոր կարիքի բավարարումից, այսինքն՝ նրանից զգալի զոհողություն ենք պահանջում: Եթե, այնուամենայնիվ, մենք միևնույն հարկային դրույթաչափը սահմանեինք խոշոր վճարողի համար, դա կնշանակեր, որ մենք նրանից շատ ավելի փոքր զոհողություն կպահանջեինք, քանի որ այդքան ցածր հարկի վճարումը կպահանջի նրանից հրաժարվել ինչ-որ այլ, բոլորովին անհարկի կարիքի բավարարումից, ուստի նման «անարդարությունը» վերացնելու համար անհրաժեշտ է խոշոր վճարողի վրա հարկման ավելի բարձր տոկոս սահմանել»:¹

Նվազագույն զոհողության տեսության համաձայն՝ հարկային քաղաքականության խնդիրն է ազգային տնտեսությունից բոլոր հարկ վճարողների համար հանել որոշակի անհրաժեշտ գումար՝ բոլորի համար նվազագույն «զոհողությամբ»: «Եվ քանի որ մանր հարկ վճարողի զոհողությունը միշտ շատ ավելի մեծ է, քան խոշոր հարկ վճարողինը, ապա նրա համար հարկման տոկոսային դրույթաչափը նվազեցնելով, իսկ խոշոր հարկ վճարողի համար այն բարձրացնելով և պրոգրեսիայի ճիշտ կառուցմամբ, մենք զոհողության արժեքը հասցնում ենք նվազագույնի»:²

Տնտեսության կարգավորման գործում պրոգրեսիվ հարկման մեխանիզմին կարևոր նշանակություն տալիս քեյնսիականները, ում մոտեցումներից ելնելով, տնտեսական գործունեության խթան է հանդիսանում վճարունակ պահանջարկը: Հետևաբար, ցածր եկամուտներն ազատվում են հարկերից, իսկ միջին և հատկապես բարձր եկամուտների նկատմամբ կիրառվում է հարկման պրոգրեսիվ սանդղակ: Քանի որ ցածր և որոշ չափով միջին եկամուտներն արագորեն ծախսվում են սպառման վրա, առաջընթացը նպաստում է արդյունավետ պահանջարկի ընդլայնմանը և, համապատասխանաբար, խթանում է արտադրությունը: Հետևաբար, ըստ քեյնսիզմների՝ «բնակչության եկամուտների պրոգրեսիվ հարկումը սոցիալապես արդար է, քանի որ այն նպաստում է եկամուտների վերաբաշխմանը հոգուտ աղքատների և պետական ծախսերի ֆինանսավորմանը, որն ընդհանուր առմամբ ընդլայնում է վճարունակ պահանջարկը և բարենպաստորեն ազդում տնտեսության զարգացման վրա»:³

Որո՞նք են հարկման պրոգրեսիվ մեխանիզմի առավելությունները և թերությունները.

Առավելություններն են՝

1. պրոգրեսիվ հարկումը ստեղծում է ավելի լայն հնարավորություններ եկամուտների վերաբաշխման համար, քան հարկման ցանկացած այլ մեխանիզմ,

2. բյուջեի հարկային եկամուտների ավելացում, բյուջետային դեֆիցիտի ծածկման հնարավորության առաջացում, ինչը շատ կարևոր է հատկապես տնտեսական փոխակերպումների հետևանքով առաջացած անկայունությունը մեղմելու համար.

3. սոցիալական շերտավորման նվազեցում, քանի որ ավելի շատ եկամուտ ստացողն ավելի մեծ մասնաբաժին է մուծում իր եկամտից և հակառակը⁴:

Թերություններն են՝

¹ Соколов А.А., Теории налогов. – М.: ЮрИнфоР-Пресс, 2003, стр. 208.

² Նույն տեղում, էջ 209

³ Моченева К.В., Особенности налога на доходы физических лиц в России // Международный бухгалтерский учет. – М.: Финансы и кредит, 2012. – № 18. – стр. 35.

⁴ Аверьянова А.В., Нужна ли России прогрессивная шкала налогообложения?, УДК 336.531.2:338.43(571.15), https://elibrary.ru/download/elibrary_47371310_51830117.pdf, cc. 3-4

1. պրոգրեսիվ հարկումը խոչընդոտում է շուկայական արդյունավետությանը, քանի որ եկամուտների աճին զուգընթաց հարկային դրույքաչափի աճը զսպում է տնտեսական ակտիվությունը և շատ հաճախ նպաստում ստվերային տնտեսության աճին: Այս հանգամանքներում, բացասական հետևանքներից խուսափելու համար, անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում կիրառության մեջ դնելով եկամուտների պրոգրեսիվ հարկումը՝ զուգահեռ ստեղծել տնտեսական ակտիվությունը խթանող այլ մեխանիզմներ: Բացի այդ, անհրաժեշտ են նաև արժեքային բնույթի փոփոխություններ, մասնավորապես՝ հասարակության մեջ համապատասխան իրավագիտակցության ձևավորում և իրավական նիհիլիզմի հաղթահարում,

2. տարածաշրջանային կայունացումը հնարավոր է լինում ապահովել միայն խոշոր քաղաքների մակարդակով, ինչն առաջ է բերում ոչ համաչափ զարգացման վտանգ. սա նշանակում է, որ հարկման մեծ բազայի շնորհիվ առավել հարուստ շրջաններն առավել կբարգավաճեն, իսկ առավել աղքատները կշարունակեն մնալ զարգացման միևնույն մակարդակի վրա,

3. սոցիալական բնույթի խնդիրներ՝ գործազրկության մակարդակի ավելացման ռիսկ, աշխատանքային ակտիվության և ներդրումների նվազում և այլն:¹

Եզրակացություն

Այսպիսով՝ անկախ հարկման մեխանիզմից, հարկերը հանդես են գալիս որպես բյուջեն համալրելու, մասնավորապես՝ բյուջեի հարկային եկամուտներն ավելացնելու միջոց: Մյուս կողմից, կարևոր է նշել, որ բնակչության եկամուտների հարկման մեխանիզմը հանդիսանում է մի գործիք, որի շնորհիվ երկրում ապահովվում է հասարակության տարբեր խմբերի միջև եկամուտների արդյունավետ վերաբաշխումը: Իր հերթին, ինչպես հարկման ցանկացած համակարգ, պրոգրեսիվ հարկումն ունի իր հնարավորությունները և սահմանափակումները: Ընդհանուր առմամբ, հարկման այս ձևի հիմնական նպատակն է հարթել ֆինանսական հոսքերի անհամաչափությունը, դանդաղեցնել հարուստների շրջանում կապիտալի կուտակման գործընթացը և աջակցել բնակչության աղքատ հատվածին՝ այդպիսով նվազեցնելով նաև խորը սոցիալական լարվածության ձևավորման վտանգը. այս ամենը վկայում է բնակչության եկամուտների պրոգրեսիվ հարկման սոցիալական բարձր նշանակության մասին, իսկ վերջինիս ներդրումն այս կամ այն երկրում սովորաբար կապված է հարկման սոցիալական արդարության բարելավման անհրաժեշտության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Аверьянова А.В., Нужна ли России прогрессивная шкала налогообложения?, УДК 336.531.2:338.43(571.15), https://elibrary.ru/download/elibrary_47371310_51830117.pdf
2. Изотова О.И., Налог на доходы физических лиц как инструмент реализации социальной политики государства // Экономика. Налоги. Право. 2014. № 2.
3. Костылева Л.В., Налогообложение как механизм регулирования неравенства населения / Л.В. Костылева // Экономические и социальные перемены: факты,

¹ Деревянкина О.А. Некоторые вопросы по учету налогообложения //Налоговая политика и практика. – 2016. – № 7. – сс. 55-58

- тенденции, прогноз. – 2011. – № 3 (15).
4. Лыкова Л. Н., Букина И. С. Налоговые системы зарубежных стран: учебник для бакалавриата и магистратуры. М. : Издательство Юрайт, 2017.
 5. Морозова Г.В., Мигунова С.В., Введение прогрессивной шкалы налогообложения физических лиц как способ реализации принципа справедливости в налогообложении, сс.1-2,
https://www.elibrary.ru/download/elibrary_21052178_52566201.pdf
 6. Моченева К.В., Особенности налога на доходы физических лиц в России // Международный бухгалтерский учет. – М.: Финансы и кредит, 2012. – N 18.
 7. Пушкарева В.М. История финансовой мысли и политики налогов. – М.: Финансы и статистика, 2001.
 8. Соколов А.А., Теории налогов. – М.: ЮрИнфоР-Пресс, 2003.
 9. Шевяков А.Ю., Кирута А.Я., Неравенство, экономический рост и демография: неисследованные взаимосвязи. М.: М-Студио, 2009, URL:
<http://csl.isc.irk.ru/BD/Books/Демография.pdf>
 10. Шевяков А.Ю., Неравенство доходов как фактор экономического и демографического роста // Инновации. 2011. № 1.

REFERENCES

1. Aver'janova A.V., Nuzhna li Rossii progressivnaja shkala nalogooblozhenija?, UDK 336.531.2:338.43(571.15),
https://elibrary.ru/download/elibrary_47371310_51830117.pdf
2. Izotova O.I., Nalog na dohody fizicheskikh lic kak instrument realizacii social'noj politiki gosudarstva // Jekonomika. Nalogi. Pravo. 2014. № 2.
3. Kostyleva L.V., Nalogooblozhenie kak mehanizm regulirovanija neravenstva naselenija / L.V. Kostyleva // Jekonomicheskie i social'nye peremeny: fakty, tendencii, prognoz. – 2011. – № 3 (15).
4. Lykova L. N., Bukina I. S. Nalogovyje sistemy zarubezhnyh stran: uchebnik dlja bakalavriata i magistratury. M. : Izdatel'stvo Jurajt, 2017.
5. Morozova G.V., Migunova S.V., Vvedenie progressivnoj shkaly nalogooblozhenija fizicheskikh lic kak sposob realizacii principa spravedlivosti v nalogooblozhenii, ss.1-2,
https://www.elibrary.ru/download/elibrary_21052178_52566201.pdf
6. Mocheneva K.V., Osobennosti naloga na dohody fizicheskikh lic v Rossii // Mezhdunarodnyj buhgalterskij uchet. – М.: Finansy i kredit, 2012. – N 18.
7. Pushkareva V.M. Istorija finansovoj mysli i politiki nalogov. – М.: Finansy i statistika, 2001.
8. Sokolov A.A., Teorii nalogov. – М.: JurInfoR-Press, 2003, str. 208.
9. Shevjakov A.Ju., Kiruta A.Ja., Neravenstvo, jekonomicheskij rost i demografija: neissledovannye vzaimosvjazi. М.: М-Studio, 2009, URL:
<http://csl.isc.irk.ru/BD/Books/Demografija.pdf>
10. Shevjakov A.Ju., Neravenstvo dohodov kak faktor jekonomicheskogo i demograficheskogo rosta // Innovacii. 2011. № 1.

РЕЗЮМЕ

**Прогрессивное налогообложение как предпосылка эффективности
перераспределительной политики**

Нарине Асрян

*Факультет международных отношений ЕГУ, аспирант кафедры политических
институтов и процессов
Ереван, Республика Армения*

Ключевые слова: (не) равенство, доход, рынок, социальная справедливость, социальная напряженность, механизм налогообложения, прогрессивный, регрессивный и пропорциональный налог, налоговая ставка, теория равенства жертв, теория минимальной жертвы.

В современных социально-экономических условиях возросла необходимость поиска и имплементации новых источников поступлений государственных налогов, что связано с внедрением различных механизмов налогообложения - плоского, прогрессивного и регрессивного. Говоря о налогообложении, следует учитывать не только его финансово-экономический, но и политический аспект, так как тот или иной механизм налогообложения отражает классовые интересы разных групп общества. В контексте данной статьи особое внимание уделено прогрессивному налогообложению, которое исторически являлось инструментом реализации перераспределительной политики государства, то есть предпосылкой обеспечения эффективного перераспределения ресурсов внутри общества. В статье представлены теоретические основы механизма прогрессивного налогообложения, в частности, в рамках теорий равенства жертв и минимальной жертвы, обосновывается необходимость его реализации, приведены особенности, а также преимущества и недостатки этого уникального механизма налогообложения. С одной стороны, это стимул развития, так как способствует повышению рентабельности экономики, доведению социального неравенства до разумного уровня, снижению социального расслоения, а с другой стороны, увеличивает риск получения невидимых доходов, следствием чего является теневая экономика, снижение роли материальных стимулов, в связи с чем необходимо учитывать экономические, социальные и правовые последствия применения прогрессивного механизма налогообложения.

SUMMARY

Progressive Taxation as a Precondition for Effectiveness of Redistribution Policy

Narine Asryan

*YSU, Faculty of International Relations, Ph.D. Student of the Chair of Political Institutions and Processes
Yerevan, The Republic of Armenia*

Keywords: (in)equality, income, social justice, social tension, taxation mechanism, progressive, regressive and proportional taxation, tax rate, theory of equation sacrifices, theory of minimum sacrifice.

In modern socio-economic conditions, the need to search for and implementation new sources of state tax revenues has increased, which is associated with the introduction of various taxation mechanisms - flat, progressive and regressive. Generally speaking, it follows that not only

the financial-economic, but also the political aspect is taught, so that as such or any other mechanism of taxation reflects the class interests of different groups.

In the context of this article, special attention is paid to progressive taxation, which has historically been a tool for implementing the redistributive policy of the state, that is, a prerequisite for ensuring the effective redistribution of resources within society. The article presents the theoretical foundations of the progressive taxation mechanism, in particular, within the framework of the theories of equation of sacrifices and the theory of minimum sacrifice, substantiates the need for its implementation, specifics, as well as the advantages and disadvantages of this unique taxation mechanism. On the one hand, this is an incentive for development, as it helps to increase the profitability of the economy, bring social inequality to a reasonable level, reduce social stratification, and on the other hand, it increases the risk of receiving invisible income, resulting in a shadow economy, reducing the role of material incentives, due to which it is necessary to take into account the economic, social and legal consequences of applying a progressive taxation mechanism.